ՆԱԽՆԻՆԵՐԻ ԿԱՆՉԸ

Ը

1. Սկ, ստ, սպ, շտ, զգ, զբ, սփ հնչյունակապակցություններից առաջ թույլ լսվող ը-ն չի գրվում, օրինակ՝ (ը)սկսել, (ը)սթափվել, (ը)ստեղծել, (ը)սպասել, (ը)շտապել, (ը)զգույշ, (ը)զբաղվել, (ը)սփոփել:

Բացառություն են կազմում սպրդել, սփրթնել, շտկել, ստել բառերը, որոնցում ը-ն բաղաձայնից հետո է արտասանվում, այսպես՝ ս(ը)պրդել, ս(ը)փրթնել, շ(ը)տկել, ս(ը)տել:

2. Բառասկզբի ը-ն մի քանի բառերում չի արտասանվում, օրինակ՝ շտեմարան, սկուտեղ, սպասք, սփյուռք բառերը պետք է արտասանել առանց բառասկզբի ը-ի:

3. Բառասկզբում արտասանվող ը հնչյունը գրվում է միայն ղ, մ, ն բաղաձայններից առաջ, օրինակ՝ ըղձալ, ըմբիշ, ընկեր, ըմպել, ընտիր, ընդունել, ինչպես նաև ըստ բառում:

4. Բառամիջում ը-ն գրվում է, երբ ը-ով սկսվող բաղադրիչ կա, օրինակ՝ խաղընկեր, առընթեր, սրընթաց, օրըստօրե:

5. Մյուս բոլոր դեպքերում բառամիջում լսվող ը-ն չի գրվում, օրինակ՝ կ(ը)նունք, կ(ը)րթություն, անբ(ը)նական:

Լսվող ը-ն գրվում է միայն այն դեպքում, երբ բառի մեջ միակ ձայնավորն է, օրինակ՝ Մըսր, շըխկ, թրխկ, սըր «անգլերեն՝ պարոն»:

6. Բառավերջում ը հնչյունը գրվում է, երբ արտասանվում է, օրինակ՝ դառը, խառը, սառը, ինը, տասը, ինքը, ոչ մեկը, ընդհակառակը, ընդամենը, մեկնումեկը, որոնցում ը-ն կորցրել է հոդի արժեքը, ինչպես նաև գրվում է, երբ այն հոդ է՝ գիրքը, տետրը, մայրը:

7. Տողադարձի և վանկատման ժամանակ գաղտնավանկի ը-ն գրվում է, օրինակ՝ գըլ-խարկ, մըկ-րատ, դուս-տըր, Մը-կըրտիչ (Մկըր-տիչ):

Առաջադրանքներ

1. Նախորդ դասերից դուրս գրիր *ը* ձայնավորով սկսվող բառեր:

2. Անհրաժեշտ տեղում գրիր *ը* տառը:

Հյուր_նկալ, գույն_զգույն, մեկ_նդմեջ, խոչ_նդոտ, ակ_նդետ, օր_ստորե, առ_նչվել, ազգ_նտիր, հյուս_ն, աստ_ղ, դաս_նկեր, ս_փրթնել, ան_նդունակ, սր_նթաց, մ_թնշաղ, լուս_նկա, հատ_նտիր, ակ_նկոր, շ_խկ, մերթ_նդմերթ, ձ_կնկիթ:

3. Բառարանից գտիր *ընդոծին*, *ընձյուղ*, *ընչացք*, *ընդերք* բառերի բացատրությունը և դրանցով նախադասություններ կազմիր:

4. ա) Տրված արմատների միջոցով կազմիր բարդ բառեր՝ *ընկույզ* + *գույն*, *ընտանի* + *սեր*, *ինձ* + *առյուծ*, *ընծա* + *գիր*, *ըմբիշ* + *մարտ*:

բ) Տրված արմատների և ածանցների միացումով կազմիր ածանցավոր բառեր՝ *ընկեր* + *ական*, *ընծա* + *արան*, *ընկույզ* + *ենի*, *ումպ* + *անակ*:

5. Տրված բառակապակցությունների բաղադրիչում լրացրու բաց թողնված տառերը: Բառակապակցություններով կազմիր կապակցված խոսք:

Սր_նթաց մեքենա, մեղմ_որ քամի, փշոտ _զնի, սիրելի հոր_ղբայր, փարթամ _նկուզենի, բաց_թյա տաղավար, շոգ կես_ր, հն_ոյա երգ, երգում _ի, խոտառատ գետ_զր, պո_զիայի ժամ, դժվար վեր_լք, ան_ոևակայելի օր, _ռակյալ սնունդ, հաճույքով _մբոշխնել, համեղ _նթրիք: